10. ԲԱԿԼԱ-ՏՂԱՆ

Կըլի, չի ըլի մե մարթ, մե կնիկ, տանցը տղա չի ըլի։

Տրկեցքերըեն կըխառցուցեն, տրկեցքերըը կասեն.—Իրկուն բաղլա ցանի՛ պակտ, առատունը ըմեն կըլեն տղա։

Էտ կնիկն էտենց արաց, առատուն իչկաց, ըմեն էլած ի տղա, մեյն ի ասելըի՝ մամա՛, քախցած եմ, մեյն ասելըի՝ մամա՛, ծարավ եմ, մեկէլը՝ մամա՛, մսես եմ...

Մերն ըմենին էլ կավլի, կըլցի թոնդիրը, իտև մերը կասի.—Մեկը չըթողիմ, խորը խաց տաներ։

Ակեն մեկը կասի.—Թող ես տանեմ, մամա՛։

Մերը տար անունը կըտնի ճռտո-բալա, մերը կասի.—Փչատի տակեն չընսնես, դաղ մե դև կա, քեզի կուտի։

Տղան կէթա, կըլի էն փչատի վրան, մե ծծում խեծնող պառավ կըկա, կասի.—Մե փչա՛տ թալ, ուտեմ։

Էտ մե փչատ կըթալի։

—Տարով չըկչտացամ, ճող կգի՛,—կասի։

Տղան ճողը կըկգի, էտ տղային կըպռնի, կըթալի ջվալի մեչ, կըտանի կըտնի ճանբախ, որ դինջանա, էտ տղան կըլի, կըփախնի կըկա, փչատի ծառին կընստի։

Պառավ կըտանի, ուր ախճկան կասի.—Տուռը պա՛ց, խողաձին եմ պերե։

Ախճիգ տուռ կըպացի, կիչկա, ջվալի մեջ պան չըկա։

Պառավն իրեք տըր էտենց տղային կըպերի, տղան կըփախնի, մե տըր էլ տղային կըպերի տուն, կըպերեն, որ խաչեն տղային, դաղանը ճուր կըլցեն, կըեռցուցեն, որ խաչեն, որ ուտեն, տղան կըթռնի մե պանցը թախչիկի վրա։

Պառավը դար կասի.—Դո՞ր էլար, ես էլ ըլեմ։

Տղան կասի.—Ոտս տրիմ սանդեռքի վրա, էլամ։

Պառավը կանի, որ ըլի, կընի կետին, կըմեռնի։ Տղան դար ախճկան էլ կըսպանի, տանցը կըխաչի, տանց միս կուտի, կասի.

—Անոչ ուտեմ տատկե միս,

Անոչ ուտեմ մամկե միս։